ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 319 – Ա **22 հունիսի 2021 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին, 2-րդ գլխի և 9-րդ գլխի 80-րդ կետի պահանջներն

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Լուսինե Վարդանյանին:

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2021 թ. հունիսի 22 -ի
N 319 - Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույց

1. «Վաղաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 3-ին, ժամը՝ 11^{00}-ին
2. «Լճաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 3-ին, ժամը՝ 14^{00}-ին
3. «Ծակքարի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 7-ին, ժամը՝ 11^{00}-ին
4. «Նորատուսի ԲԱ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 7-ին, ժամը՝ 14^{00}-ին
5. «Ծովագյուղի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 10-ին, ժամը՝ 11^{00}-ին
6. «Լուսակունքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 10-ին, ժամը՝ 14^{00}-ին
7. «Դդմաշենի ԲԱ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 14-ին, ժամը՝ 11^{00}-ին
8. «Երանոսի ԲԱ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 14-ին, ժամը՝ 14^{00}-ին
9. «Վարդենիկի ԱԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 11^{00}-ին
10. «Լճափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	2021թ. սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 14^{00}-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

22.06.2021

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ